ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կալիֆորնիայում, ինչպես եւ աշխարհի այլ վայրերում հաստատված հայությունը միշտ խնդիր է ունեցել ազգային ինքնության պահպանման, ինչը իրականացվել է հոգեւոր եւ մշակութային կյանքի կազմակերպմամբ եւ զարգացումով: Միայն չի լինի ասել, որ ԱՄՆ-ում հայության ազգային ինքնության ու նկարագրի պահպանման գործում անփոխարինելի եւ առաջնային դերը պատկանում է եկեղեցուն: Այն տեղի հայ համայնքների հոգեւոր, հասարակական ու մշակութային գործունեության կենտրոնական ու միավորող օղակն է, եւ իզուր չէ, որ Ֆրեզնոյի հայ համայնքի ձեւավորման սկիզբը կապվում է հենց առաջին եկեղեցու հիմնադրման հետ:

Կալիֆորնիայի հայ համայնքներում նախ գերակշռել են բողոքական եկեղեցիների հետեւորդները (ավետարանական, ժողովական եւ երիցական): Սա բնական էր, քանի որ Արեւմտյան Հայաստանից դեպի Կալիֆորնիա հայության ներգաղթը սկզբնավորվել էր ամերիկյան բողոքական միսիոներների՝ Օսմանյան Թուրքիայում ծավալած գործունեության հետեւանքով[1]: Կարեւոր է նկատել, որ ամերիկյան բողոքական միսիոներների շարժումը մեծ ազդեցություն է ունեցել հայերի՝ տեղի հասարակությանը ինտեգրվելու գործում:

Ֆրեզնոյում հաստատված առաջին հայերը եկեղեցի կառուցելու համար համապատասխան միջոցներ չեն ունեցել, ուստի 1884-ին միացել են տեղի ամերիկացիների հետ եւ կառուցել առաջին ժողովական եկեղեցին (First Presbyterian Church): Շուտով հայերի եւ տեղացիների միջեւ անհամաձայնություններ են ծագել՝ կապված վերջինների՝ հայերի հանդեպ կիրառած սահմանափակումների հետ: Երկար ժամանակ՝ մինչեւ 1920-ական թթ., Կալիֆորնիայում հաստատված հայության հանդեպ կիրառվել է խտրական քաղաքականություն, այդ թվում՝ կրոնական: Հաճախ հայերին համարել են մուսուլման, քանի որ վերջիններս ունեցել են թուրքական անձնագրեր: Ճիշտ է, հայերին թույլատրել են օգտվել եկեղեցու մատուցած ծառայություններից, սակայն որոշակի սահմանափակումներով. օրինակ՝ հայերը եկեղեցում նստելու իրավունք չեն ունեցել կամ ծայրահեղ դեպքում պարտավոր են եղել առանձին նստել՝ տեղացիներից հեռու, հակառակ դեպքում՝ դուրս են վռնդվել[2]: Շուտով՝ 1895թ., եկեղեցին մասնատվել է[3]: Դրանից հետո երկու տարի շարունակ հայերը հաճախել են տեղի երիցական եկեղեցին, իսկ 1897թ. ձեռնարկել իրենց սեփական՝

1 Տե՛ս **R. Mirak.** Torn between two lands: Armenians in America 1890 to World War I. Massachusetts. 1983, էջ 36-44: **Մ. Գ. ՃԻՔՄԷՃԵԱՆ,** Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնո, 1955, էջ 103: **J. H. Tashjian.** The Armenians of the United States and Canada. Boston. 1947, էջ 12, 13:

2 Տե՛ս **D. Zenian.** The Seropian brothers late 1890's. "AGBU". November. 1996, էջ 12: **A. Minasian.** Settlement Geography of Armenians in Fresno. "The Armenian Review". Autumn. 1972. vol. XXV, № 3-99, էջ 52:

3 Տե՛ս **A.Minasian,** նշվ. աշխ., էջ 52:

առաջին Հայ երիցական եկեղեցու հիմնադրման համար անհրաժեշտ դրամահավաք: Նախաձեռնողները հիմնականում 1882-1883թթ. Մարզվանից գաղթած հայերն էին՝ մոտ 40 հոգի, որոնք 1900թ. սկսել են եկեղեցու շենքի կառուցումը: Երիցական այս եկեղեցին Ֆրեզնոյի առաջին հայ եկեղեցին էր, որի կառուցման համար հայությունը ծախսել էր մոտ 15.000 դոլար, ինչը լուրջ գումար էր այդ ժամանակ: Տարբեր ժամանակներում եկեղեցում իրենց հոգեւոր ծառայությունն են մատուցել Ավետիս Վարդանյանը, Խաչիկ Միքայելյանը, Հակոբ Աժդերյանը, Թ. Բուրբանկը, Հարություն Ֆիլյանը եւ այլք: Եկեղեցուն կից գործել են Հայ տիկնանց հայրենակցական միությունը եւ Բիթլիս որբախնամ կազմակերպությունը, որոնք հայանպաստ աշխույժ գործունեություն են ծավալել՝ հիմնական նպատակ ունենալով սատարել Արեւմտյան Հայաստանում մնացած հայությանը: 1920-ականներին Հայ երիցական եկեղեցու հետեւորդների թիվը հասել է 1000-ի[4]:

Հայ երիցական եկեղեցու կառուցմանը մի քանի տարի անց հաջորդել է Հայ պանդխտաց ժողովական եկեղեցու կառուցումը: Բանն այն է, որ Ֆրեզնո եկած առաջին հայերից ոմանք չեն ցանկացել հաճախել երիցական եկեղեցի, քանի որ հարել են ժողովականին, ուստի 1901թ. ձեռնարկել են սեփական եկեղեցու կառուցումը: 1911թ. հայ ժողովականները գնել են եկեղեցու շենքը 1000 դոլարով: Ուշագրավ է, որ սա այն նույն շենքն էր, որտեղից 27 տարի առաջ հայերին վտարել էին իրենց ամերիկացի դավանակիցները[5]: Տարեցտարի Հայ պանդխտաց ժողովական եկեղեցին ծաղկել է ու ընդլայնել իր գործունեության շրջանակները: 1918 թ. այն ունեցել է 4-500 հետեւորդ: 1920-ական թթ. սկզբին եկեղեցուն կից գործել է Ամերիկահայ երիտասարդաց միությունը, որի կազմակերպած միջոցառումների ու հավաքների ժամանակ հնարավոր է դարձել հայ երիտասարդների առավել հաճախ հաղորդակցումը, հետեւաբար նաեւ՝ ազգային սովորույթների ու ավանդույթների պահպանումը[6]:

Բացի Ֆրեզնոյից բողոքական եկեղեցիներ են հիմնադրվել նաեւ Ֆաուլերում (Հայ ժողովական), Եդեմում (Հայ երիցական, Գողգոթա հայ երիցական), Քինգզբրրգում (Հայ մարտիրոսաց), Ռիդլիում (Հայ ժողովական), Փարլրում (Հայ ժողովական Ձիթենյաց), Լոս Անջելեսում (Գեթսեման ժողովական, Հայկական Մասիս), Սան Ֆրանցիսկոյում (Գողգոթա հայ ավետարանական) եւ այլուր: Ֆաուլերի հայ ժողովական եկեղեցին հիմնադրել են 1903 թ. այստեղ եկած առաջին հայ ընտանիքները: Եկեղեցու շենքը գնվել է հիմնադրումից չորս տարի անց՝ 1907-ին[7]: Փարլրի ձիթենյաց ժողովական եկեղեցին կառուցվել է 1911 թ.: 1924 թ. ունեցել է 50 հետեւորդ, որոնց թիվը հետագայում նվազել է տեղի հայ բնակչության թվի կրճատումով[8]: Եդեմի հայ երիցական եկեղեցու կառուցումը սկսել է 1911թ. ապրիլի 2-ին: Կառուցմանը մասնակցել են 45 հայ երիցականներ: 1912թ. արդեն եկեղեցու շենքը պատրաստ է եղել շահագործման: Հոգեւոր առաջնորդն է եղել Մելքոն Ջենանյանը: Եդեմի հայ երիցական եկեղեցին մեծ դեր է խաղացել Կալիֆորնիայում ավետարանչական ուսմունքի

4 Տե՛ս **Ա.Վարդանեան,** Ֆրէզնոի եւ շրջակայից հայ աւետարանական եկեղեցիները (**Մուշեղ Եպիսկոպոս,** Ամերիկահայ գաղութագրոյցը, Բ տարի, էջ 373, 375): **T. B. Khungian.** Origins and Development of the Fresno Armenian Community to the 1918 year. "The Armenian Review". February. 1979. vol. XXXI, № 2-122, էջ 169:

5 Տե՛ս **B. Bulbulian** The Fresno Armenians: History of a Diaspora Community. Fresno. 2000, էջ 87-89:

6 Տե՛ս **T. B.Khungian.** նշվ. աշխ., էջ 169:

7 Տե՛ս **Ա.Վարդանեան,** նշվ. աշխ., էջ 373, 375:

8 Տե՛ս **B. Bulbulian,** նշվ. աշխ., էջ 102:

տարածման ու ամրապնդման գործում[9]: Ինչ վերաբերում է կաթոլիկ հայերին, ապա նրանց թիվը սկզբնապես եւ հետագայում էլ սակավ է եղել Կալիֆորնիայում: Սեփական եկեղեցի չունենալու պատճառով նրանք հաճախել են ամերիկյան կաթոլիկ կամ հայ առաքելական եկեղեցիներ: Հետագայում միայն, երբ քիչ թե շատ սրվարացել է կաթոլիկ համայնքը, կառուցվել են եկեղեցիներ[10]:

Ինչպես նշվեց, Կալիֆորնիայի հայ համայնքներում նախ գերակշռել են բողոքական եկեղեցիների հետեւորդները, սակայն ասրիճանաբար բողոքական եկեղեցիներն իրենց դիրքերը զիջել են առաքելականին՝ վերջինիս մեծ թվով հետեւորդների հոսքի պատճառով:

Դեռեւս 1895 թ. Ֆրեզնոյի հայության շատ քիչ մասն է պատկանել առաքելական դավանանքին: Նույն թվականին Ֆրեզնո գաղթած Ահարոն վարդապետ Մելքոնյանի առաջնորդությամբ առաքելական հայերը իրենց կրոնական պաշտամունքը կատարում էին Ֆրեզնոյի Հայ գրադարանային միության շենքում, գերմանական եկեղեցիներում երբեմն էլ մոտակա լեռներում՝ վրանների տակ[11]:

1899 թ. Ֆրեզնոյում հանգանակություն է ձեռնարկվում Հայ առաքելական եկեղեցու շենքի կառուցման համար: Մեկ տարի անց սկսվում է եկեղեցաշինությունը: Որոշվում է կառուցվող եկեղեցին անվանել Սուրբ Երրորդություն[12]: Տեղի հայ առաքելականները՝ Ահարոն վարդապետի գլխավորությամբ, Ֆրեզնո են հրավիրում ԱՄՆ-ի Հայ Առաքելական Եկեղեցու արեւելյան թեմի առաջնորդ Հովսեփ արք. Սարաճյանին, որը նույն թվականի հոկտեմբերի 14-ին կատարում է Սուրբ Երրորդություն եկեղեցու օծումը[13]:

Լինելով Կալիֆորնիայում կառուցված առաջին, իսկ ԱՄՆ-ում երկրորդ (առաջինը Ուստրի Սուրբ Փրկիչն էր 1890-ին) Հայ առաքելական եկեղեցին՝ այն կալիֆորնիահայության համար դառնում է Մայր եկեղեցի:

Եկեղեցու օծումից հետո նկատի առնելով Ահարոն վարդապետի տարիքը՝ ընդհանուր ժողով է հրավիրվում՝ հոգեւոր նոր հովիվ ընտրելու համար: 1902 թ. Ֆրեզնոյի Հայ Առաքելական Եկեղեցու հովիվ է ընտրվում Սահակ վրդ. Նազարեթյանը, որը ծառայում է մինչեւ 1906 թ.: Նազարեթյանին հաջորդում է Թորոս քհն. Ջուղայեցին, որը, սակայն երկար չի ծառայում: 1908 թ. Ֆրեզնո է գալիս Հովսեփ արք. Սարաճյանը եւ երկու տարի առաջնորդում է եկեղեցին: Սկսած 1910-ից եկեղեցու առաջնորդն է դառնում Համազասպ քահանան: 1894-1910 թթ. եկեղեցին կատարում է 436 մկրտություն, 155 հուղարկավորություն եւ 103 պսակադրություն[14]:

1913 թ. Սուրբ Երրորդության շենքը այրվել է հրդեհից: Մեկ տարի անց տեղի հայ առաքելական համայնքը Էջմիածնի Մայր տաճարի նմանությամբ կենտրոնազմբեթ

9 Տե՛ս **Ա.Վարդանեան**, անդ:

10 Տե՛ս **Ռ.Փիրումյան, Ք.Ավագյան,** Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Հայ ստիյուռք հանրագիտարան», Երեւան, 2003, էջ 51: **Ս.Գալոյան,** Շիրակի հայերի գաղթը դէպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 92-94:

11 Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս,** Գալիֆորնիոյ գաղութը, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 63:

12 Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս,** նշվ. աշխ., էջ 64: **A.Minasian,** նշվ. աշխ., էջ 63:

13 Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս,** նույն տեղը: **A.Minasian,** նշվ. աշխ., էջ 51: **Ed. Minasian.** The Armenian Community of California: The first one hundred years. Los Angeles. 1982, էջ 6:

14 Տե՛ս **A. Minasian,** նշվ. աշխ., էջ 51: **Մուշեղ Եպիսկոպոս,** նշվ. աշխ., էջ 68:

քառանիստ նոր շենք է կառուցել (ճարտարապետ՝ Գարեգին Քոնդրաջյան), որը գործում է մինչ օրս[15]: 1910-ական թթ. վերջին Ֆրեզնոյի հայ առաքելական համայնքը ունեցել է մոտ 1500 անդամ[16]:

Ֆրեզնոյից դուրս Հայ առաքելական առաջին եկեղեցին հիմնադրվել է Եդեմում 1904 թ.: 1909 թ. Գրիգոր եւ Հակոբ Արսլանյանների հովանավորությամբ ու աջակցությամբ սկսվել է եկեղեցու շենքի շինարարությունը՝ ճարտարապետ Գարեգին Քոնդրաջյանի հեղինակությամբ: Գրիգոր Արսլանյանը եկեղեցու շինարարության համար գնել է 3 ակր հողատարածք: Միաժամանակ տեղի հայերին հողատարածքներ է վաճառել՝ տներ կառուցելու համար, որպեսզի համախմբի նրանց: Եկեղեցին անվանվել է Սուրբ Մարիամ: Օծումը կատարվել է 1911թ. հուլիսի 3-ին: Հոգեւոր հովիվ է ձեռնադրվել Վահան քահանա Գուլդալյանը, որ ծառայել է 1922-1926 թթ.[17]:

Հաջորդը Ֆաուլերի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելական եկեղեցին է: 1900-ական թթ. վերջին Ֆաուլերում արդեն կար հայաշատ համայնք՝ մոտ 100 ընտանիքներից բաղկացած, որոնց զգալի մասը առաքելականներ էին: Դարզ է, որ կարճ ժամանակ անց պետք է անհրաժեշտություն առաջանար եկեղեցու կառուցման: 1910թ. փետրվարի 3-ին սկսվում է եկեղեցաշինությունը: Եկեղեցին անվանվում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ: Այն մինչ օրս ծառայում է Ֆաուլերի հայ համայնքին եւ ունի բազմաթիվ հետեւորդներ[18]:

Հարկ է հիշատակել նաեւ Ռիդլիի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ առաքելական եկեղեցին, որը հիմնադրվել է 1923 թ.՝ տեղի բնակիչներ Ս. Թութելյանի, Կ. Ասլանյանի, Ս. Բարեջանյանի եւ այլոց նախաձեռնությամբ: Եկեղեցու շինության համար 3.500 դոլարով տարածք է գնվել: Օծումը տեղի է ունեցել 1924 թ. նոյեմբերի 23-ին: Առաջին հովիվը եղել է Խաչիկ Կռուզյանը, որի հնգամյա ծառայությունից հետո եկեղեցին երկար տարիներ մնացել է առանց հովիվի[19]: 1910-ական թթ. հայկական առաքելական եկեղեցիներ են հիմնադրվել նաեւ Լոս Անջելեսում (Սուրբ Հակոբ, Սուրբ Խաչ) եւ Սան Ֆրանցիսկոյում (Սուրբ Հովհաննես Մկրտիչ):

Լոս Անջելեսի Սուրբ Խաչ առաքելական եկեղեցին հիմնադրվել է 1912թ.՝ Ֆրեզնոյի Սուրբ Երրորդություն եկեղեցու ավագ սարկավագ Միհրան Մելիքյանի (հետագայում՝ Տեր Ատոմ քահանա) եւ տեղի հայ համայնքի՝ մասնավորապես շիրակահայերի ջանքերով (Մկրտիչ Ավետիսյան, Միխայիլ Եղիշյան, Ալեքսան Հովհաննիսյան, Արտաշես Հարությունյան, Սիրական Գալոյան, եւ այլք)[20]:

Մինչեւ 1902 թ. ԱՄՆ-ի հայ առաքելական եկեղեցիները գտնվել են Կ. Պոլսի հայոց պատրիարքության հովանավորության ներքո: Այս շրջանում հայ հեղափոխական գործիչների ազգային եւ հակասուլթանական գործունեության արդյունքում խոչընդոտվել են Կ. Պոլսի պատրիարքարանի ու օսմանյան կառավարության հարաբերությունները եւ աստիճանաբար ԱՄՆ-ի տարբեր հայ համայնքներում ստեղծվել են առանձին եկեղեցական միավորումներ (առայժմ՝ ոչ առաջնորդություններ): Հետագայում Կ. Պոլսի

15 Տե՛ս **B. Bulbulian,** նշվ. աշխ., էջ 91, 92:
16 Տե՛ս **T. B.Khungian,** նշվ. աշխ., էջ 169:
17 Տե՛ս **B. Bulbulian,** նշվ. աշխ., էջ 98:
18 Տե՛ս Անդ, էջ 96:
19 Տե՛ս Անդ, էջ 101:
20 Տե՛ս **Ս.Գալոյան,** նշվ. աշխ., էջ 92-94:

պատրիարքությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի համաձայնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսությանն է հանձնել ԱՄՆ հայ եկեղեցական թեմերի հովանավորությունը[21]:

1927թ., նկատի առնելով ԱՄՆ-ի արեւելյան եւ արեւմտյան ափերում հիմնադրված հեռզհեռե շատացող Հայ առաքելական եկեղեցիների հեռավորությունը՝ որոշվել է ստեղծել երկու՝ Արեւելյան (կենտրոնը՝ Ուսդր, ապա Բոստոն, հետագայում՝ Նյու Յորք) եւ Արեւմտյան (կենտրոնը՝ Լոս Անջելես) թեմեր: Արեւմտյան կամ Կալիֆորնիայի թեմը կազմվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցի հայրապետական կոնդակով: Առաջնորդանիստն էր Լոս Անջելեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Այսօր թեմի կազմում գործում են վերոհիշյալ բոլոր առաքելական եկեղեցիները[22]:

21 Տե՛ս **Ք.Ավագյան,** Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչեւ 1924 թ.), Երեւան, 2000, էջ 125:

22 Տե՛ս **Ռ.Փիրումյան, Ք.Ավագյան,** նշվ. աշխ., էջ 47, 48: